

ԱԳՐՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 28 - ՆՈՅԵՄԲԵՐ 5 2014 թ. ԹԻՎ 28 (2050)

ՏԱՆՈՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 թ. ԳԻՆԸ 120 ԴՐԱՄ

ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարչապետ Յուրի Աբրահամյանի գլխավորությամբ, կառավարությունում տեղի է ունեցել Հայաստանում կաթնամթերքի արտադրության ոլորտի զարգացմանը նվիրված խորհրդակցություն:

Հայրենական կաթնամթերք արտադրող ընկերությունների ներկայացուցիչները Յուրի Աբրահամյանին են ներկայացրել առաջիկա ծրագրերը, առկա խնդիրներն ու դրանց լուծման իրենց առաջարկությունները:

Վարչապետը ՀՀ կառավարության անունից պարտավորություն է հայտնել աջակցել ոլորտի զարգացմանը և հանձնարարել պարտավորություններ հարստացնելու ներքին շուկայի զարգացմանը, ինչպես նաև արտադրության ոլորտի կապակցության բարձրացմանը:

Արմավիրի մարզի Արագածի համայնքին հարկացված տրակտորի արժեքի 50 տոկոսը մարելու նպատակով, կառավարությունն իր պահուստային ֆոնդի հաշվից հարկացրել է 3.5 մլն դրամ: Գյուղական համայնքին տրամադրվող աջակցության շնորհիվ, հնարավոր կլինի ցանքաշրջանառության մեջ ընդգրկել գյուղի չօգտագործվող վարելահողերը, մշակաբույսերի վեգետացիայի ընթացքում կիրառվող ագրոտեխնիկական աշխատանքներն իրականացնել բարձր որակով:

Գյուղատնտեսության ոլորտին վերաբերող մի շարք որոշումների քննարկումով, գործադիրը հաստատել է.

✓ Տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող միասնական սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջները,

2

ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԱՆՆՐԱԾԵՆՏ ԾՐԱԳՐԵՐԸ

2015 թվականի համար գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող ծրագրերին ՀՀ պետական բյուջեի նախագծով նախատեսված է հարկացնել 10 մլրդ 25 մլն 500 հազար դրամ, որից՝ 7 մլրդ 560 մլն 700 հազար դրամ (բյուջեային ծրագրերի համար, իսկ վարկային և դրամաշնորհային ծրագրին նախատեսվում է ուղղել 2 մլրդ 464 մլն 800 հազար դրամ:

2015 թվականին գյուղատնտեսության ոլորտում քաղաքականությունն ուղղված կլինի ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ հանքային պարարտանյութերի, դիզելային վառելիքի և վարկերի մատչելիությանը: Հետևողական աշխատանքներ կիրականացվեն առավել անբարենպաստ պայմաններում տնտեսավարող սուբյեկտների վարկային տրուստային սուբսիդավորման և նպատակային ծրագրերի համաֆինանսավորման միջոցով ագրարային ոլորտում տարբեր տնտեսավարման ձևերի զարգացման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսության ոլորտի կայունությունն ապահովող և զարգացման նախադրյալներին ուղղված հետևյալ ծրագրերը՝ գյուղատնտեսության նախարարի և նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերի իրականացման համար պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 641 մլն 600 հազար դրամի ընթացիկ ծախսերի իրականացում, որը ուղղվում է նախարարի և նախարարության աշխատակազմի պահպանությանը (նախարարի աշխատակազմի աշխատողների թիվը կազմում է 24, իսկ նախարարության աշխատակազմի աշխատողների թիվը 124 հաստիքային միավոր): Ըստ առանձին ծրագրերի՝ նախատեսվում է հետևյալ աշխատանքների իրականացումը:

2



ՄԱՌԻՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՆԻԿԱՆ ՀԱՄԱՐՎԱԾ Է

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղի է ունեցել ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի պետական տնտեսության պետ Վարդան Ղուշյանի ասուլիսը:

Ամփոփելով ոլորտում կատարված աշխատանքները՝ նա մասնավորապես նշեց, որ 2013-2014թթ. Բելառուսի Հանրապետությունից մեր երկիր է ներկրվել և ուղղակի վաճառքի, ինչպես նաև՝ լիզինգի միջոցով ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից շուկայականից անհամեմատ՝ մոտ 30 տոկոս ցածր գներով, տնտեսավարող սուբյեկտներին են տրամադրվել 288 միավոր «ՄՏՁ 82.1» մակնիշի տրակտորներ, 20 հավաքիչ-մամլիչներ, 20 կուլտիվատորներ, 40 գուրաններ, 34 հար կարոֆիլաքանդիչներ և կարոֆիլատրակիչներ, 16 միավոր շարքացաններ և այլն: Տեխնիկան տրամադրվում է ուղղակի վաճառքի և լիզինգային եղանակով՝ փարեկան 9 տոկոս փոկոսադրույքով, 20 տոկոս կանխավճարով, մարման ժամկետը կազմում է 6 փարի՝ տրակտորների, 3 փարի՝ հարակից սարքավորումների համար: Տեսչության պետի խոսքով՝ 2010-2014 թվականներին ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի իրականացման գրառնայակի միջոցով գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններին և մարզերի արտոգտագործողների միավորումներին է տրամադրվել 467 միավոր գյուղտեխնիկա, որից 115 միավոր «ՄՏՁ 82.1» մակնիշի տրակտորներ, որոնց դիմաց օգտագործողները վճարում են միայն այդ տեխնիկայի արժեքի 20 տոկոսը: «ՀՀ գյուղատնտեսության նախարարի հանձնարարությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում օգտագործվող տրակտորների մոտ 50 տոկոսը բելառուսական «ՄՏՁ 82.1» մակնիշի են, բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հնարավորություն ստեղծել հանրապետությունում տրակտորների հավաքման և տեխնիկական սպասարկման հար-բեխոխումների աջակցության համար էլ ձեռնարկություններ հիմնելու մասին», - տեղեկացրեց Վարդան Ղուշյանը: Տեսչության պետը հավելեց, որ առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում հանրապետություն կներկրվի 4 միավոր հացահատիկահավաք կոմբայն, որին կհաջորդի ևս 8 կոմբայնի ներկրումը: Կոմբայնները, որոնց արժեքը կազմում է 30,5 մլն դրամ, կտրամադրվեն 10 փարի մարման ժամկետով, 9% փարեկան փոկոսադրույքով և 20% կանխավճարով: Վերջին փարիներին, ձեռնարկված միջոցառումների արդյունքում, վերացվել է նաև գյուղատնտեսական տեխնիկայի փարեկան պարտադիր գնման պահանջը, ինչպես նաև՝ պարզեցվել գյուղատնտեսական տեխնիկայի պետական հաշվառման կարգը:

ԾՐԱԳԻՐ

ՏԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

«Հայաստանի Հանրապետությունում, 2007-2015 թվականների փավարաբուծության զարգացման ծրագրի» շրջանակներում, 2007-2013 թթ. հանրապետություն են ներկրվել 1881 գլուխ շվից, սիմենթալ և հոլշտին ցեղերի փոհմային երինջներ, որոնք տարածամկետ վճարման պայմանով հարկացվել են 64 տնտեսավարող սուբյեկտների: Ծրագրի նպատակն է՝ ՀՀ ներկրել համաշխարհային ճանաչում ունեցող կաթնատու՝ հոլշտին և կաթնամսատու՝ շվից և սիմենթալ ցեղերի փոհմային երինջներ, դրանցից ձևավորել փոհմային նախիրներ և, փեղում սերունդ ստանալու միջոցով, կազմակերպել այդ ցեղերի վերարտադրությունը:

Ծրագրի արդյունավետությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝ հանրապետությունում ձևավորվել են բարձր մթերատու և փոհմային հարկանիշներ ունեցող կենդանիներով համալրված փավարի նախիրներ, որոնցում կովերը ցուցաբերում են 5000 կգ և ավելի կաթնատվություն («Արզնիի փոհմային ԹՏԽ» ԲԲԸ, «Ագրոհոլդինգ» ՍՊԸ, «Վամաքս» ՍՊԸ, Պավել Գուսևի, Կարեն Պողոսյանի, Պետրիկ Պետրոսյանի ֆերմերային տնտեսություններ և այլն): Մինչդեռ, խորհրդային փարիներից սկսած, մինչև կենդանիների ներկրումը հանրապետությունում կաթնատվության նման ցուցանիշ ոչ մի տնտեսություն չի ունեցել: Սպեղծվել են ներկրված ցեղերի տեղական վերարտադրությունը կազմակերպելու հնարավորություն ունեցող մեկ փայտյակից ավելի փոհմային տնտեսություններ, որոնցից երեքը («Արզնիի փոհմային ԹՏԽ» ԲԲԸ, «Ագրոհոլդինգ» ՍՊԸ, «Վամաքս» ՍՊԸ) իրականացնում են լիարժեք փոհմային հաշվառում և կենդանիների համալիր գնահատում՝ բոնիտավորում, ինչը հնարավորություն է ընձեռում այդ ընկերություններին վաճառել նաև իրենց տնտեսությունում սրացված փոհմային երինջները: Կազմակերպվել են կերակրման և խնամքի գերժամանակակից

2

1 ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

✓ Սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող պահանջները,
 ✓ Սննդամթերքի և սննդային միջավայրի հետ շփման համար նախատեսված պոլիմերային և այլ նյութերից պարբերաբար ապրանքին և նյութերին ներկայացվող պահանջները,
 ✓ Սննդամթերքում Ցեզիում-137 և Սպրոնցիում-90 ռադիոնուկլիդների թույլատրելի մակարդակները,
 ✓ Սննդային հավելումների և բուրավերիչների անվտանգությանը ներկայացվող պահանջները:

Մեկ այլ որոշմամբ, փոփոխություններ և լրացում է կատարվել «Հնդկաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն գումեջի միս ներմուծելու մասին» որոշման մեջ, որով ստեղծվում են գումեջի մսի ներմուծման գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց՝ համապատասխան չափանիշներին համապատասխանելիության ստուգման պարզաճանաչման համակարգը:

Երկու այլ որոշումներով՝ կառավարությունը հաստատել է հանքային ջրերին ներկայացվող պահանջները, շաղկապած խմելու ջրին ներկայացվող պահանջները, շաղկապած խմելու ջրերի որակի և անվտանգության չափորոշիչները:

✓ Արտադրանքի (ապրանքների) սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներին համապատասխանությունը հավաստող անվտանգության միասնական փաստաթղթի վարման կարգը,
 ✓ ՀՀ սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների և պեղանակների գրանցման ենթակա ապրանքների ցանկերը,
 ✓ Սանիտարական, անասնաբուժական, բուսասանիտարական միջոցառումների համարժեքության ճանաչման և ռիսկի գնահատման իրականացման կարգը,
 ✓ Մաքսային սահմանի և ՀՀ տարածքում անասնաբուժական վերահսկողության իրականացման միասնական ընթացակարգը,
 ✓ Անասնաբուժական վերահսկողության ենթակա օբյեկտների համարել ստուգումների, ապրանքների նմուշառման իրականացման միասնական կարգը,
 ✓ Պարենային հումքի արտադրության ժամանակ կենդանական ծագման սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների առավելագույն մնացորդային մակարդակները,
 ✓ Կենսաբանական ակտիվ հավելումների ցանկը, թույլատրելի մակարդակները, դրանց արտադրության մեջ օգտագործվող վիտամինների ձևերը և արգելված բույսերի ցանկը:

1 ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՄԱՐ

ԱՌԱՋՆԱԶԵՐԹ ԱՆՀՐԱԾԵՆՑ ԾՐԱԳՐԵՐԸ

«Մերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների ծրագիր»: Ծրագրի իրականացմանն է նախատեսվում ուղղել 58 մլն 900 հազար դրամ: Այս ծրագրի իրագործումը հնարավորություն է ընձեռում կանխել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածրորակ ունեցող սերմերի և փոխանյութի օգտագործումը, և ապահովել կոնդիցիոն սերմերի վերարտադրությունը, ինչպես նաև բույսերի նոր սորտերի կազմի ընդլայնումը, որն իրականացվում է հայ սելեկցիոնների կողմից բուծված և շրջանացված նոր սորտերի սորտափորձարկման միջոցով:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների ծրագիր»: Նախատեսվում է ուղղել 1 մլրդ 188 մլն 600 հազար դրամ: Կիրականացվեն գյուղատնտեսական կենդանիների առավել վրանգավոր հիվանդությունների 8 կանխարգելիչ և 2 անխորոշիչ միջոցառումներ: Ընդհանուր վերջնաձև կիրականացվի շուրջ 6.0 մլն պայմանական գլխի պարվաստում: Պարվաստումների, անխորոշիչ և անխորոշիչ նյութերի ձեռք բերմանը կուղղվի 594 մլն դրամ, իսկ համայնքներում գործող 650 անասնաբույժների վարձարությանը՝ 594 մլն 600 հազար դրամ: Ծրագրի իրականացումից ակնկալվում է կայուն անասնաճարակային վիճակի ապահովում:

«Անասնաբուժական կարանտինային սահմանափակումների իրականացման ծրագիր»: Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 49 մլն 800 հազար դրամ: Ծրագրի իրականացման խնդիրն է՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների, համաճարակների, բույսերի կարանտինի բռնկման դեպքում հանրապետությունում կարանտինային սահմանափակումների իրականացումը և հիվանդությունների փարածման կանխարգելումը ինչպես նաև վրանգավոր սննդամթերքի, վրանգավոր անասնակերի, սննդամթերքի և անասնակերի հետ շփող վրանգավոր նյութերի, վրանգավոր սննդային և կերային հավելումների ոչնչացման աշխատանքներին մասնակցությունը:

«Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագիր»: Ծրագրի իրականացման համար 2015 թվականին նախատեսվում է ուղղել 150 մլն դրամ: Ծրագիրը ներառում է անտառի վնասարարների և հիվանդությունների դեմ ավիացիայի միջոցով, ինչպես նաև վնասարարների և մորեխների դեմ պայքարի աշխատանքների իրականացումը շուրջ 83 հազ. հա տարածության վրա: Նշված ծրագիրը շարունակական է և ծրագրի իրականացումը նախորդ տարիներին փոխել է դրական արդյունքներ:

«Անասնաբուժական կարանտինային սահմանափակումների իրականացման ծրագիր»: Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 70 մլն 200 հազար դրամ: Նախատեսվում է 84.6 հազ. հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վրա ագրոքիմիական դաշտային հետազոտությունների իրականացում: Կիրականացվի 71.4

«Անասնաբուժական կարանտինային սահմանափակումների իրականացման ծրագիր»: Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 134 մլն 100 հազ. դրամ և ակնկալվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝
 ✓ Հանրապետությունում կարանտինային և առավել վնասակար օրգանիզմներով վարակվածության արեալի ճշգրտում, գյուղատնտեսական նշանակության հողատնտեսությունում կարանտինային սահմանափակումների իրականացում 250.0 հազ. հեկտարի վրա:
 ✓ Հանրապետությունում կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնաճարակային վիճակի ապահովում, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանություն հանրապետության 915 համայնքներում:

«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրության բարձրացման միջոցառումների ծրագիր»: Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 70 մլն 200 հազար դրամ: Նախատեսվում է 84.6 հազ. հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վրա ագրոքիմիական դաշտային հետազոտությունների իրականացում: Կիրականացվի 71.4

«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրության բարձրացման միջոցառումների ծրագիր»: Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 70 մլն 200 հազար դրամ: Նախատեսվում է 84.6 հազ. հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վրա ագրոքիմիական դաշտային հետազոտությունների իրականացում: Կիրականացվի 71.4

«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրության բարձրացման միջոցառումների ծրագիր»: Ծրագրի իրականացմանը նախատեսվում է ուղղել 70 մլն 200 հազար դրամ: Նախատեսվում է 84.6 հազ. հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վրա ագրոքիմիական դաշտային հետազոտությունների իրականացում: Կիրականացվի 71.4

1 ԾՐԱԳԻՐ

ՏԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Կրեմլի լոգիստիկայի հազարավոր մեքենայական կթի և մեքենայացված արտադրական համակարգեր ունեցող 20 փոփոխություններ՝ ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքում («Վամաք» ՍՊԸ) և ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքում («Ագրոհոլդինգ» ՍՊԸ), որոնք եզակի են մեր տարածաշրջանում, հանդիսանում են ցուցադրական փոփոխություններ և կարող են իրենց փորձը փոխանցել այլ փոփոխությունների: Ծրագրի շրջանակներում եվրոպական երկրներից ներկրված փոխմային երկնքները ցուցաբերել են բարձր մթերապովություն և հաջողությամբ հարմարվել տեղի բնակչության պայմաններին: Այս արդյունքները հնարավորություն են ընձեռել Վայոց ձորի մարզի Գնդեվազ համայնքում հիմնել ժամանակակից խոշոր տավարաբուծական համալիր, որը նախատեսված է 350 գլուխ ֆլեյֆի ցեղի կաթնամսավոր կով և 150 գլուխ երինջի համար: Աշխարհահռչակ շվեդական «Դեկալ» սարքավորումներով հագեցած համալիրը նախատեսվում է շահագործման հանձնել տարեկան: Ծրագրի գլխավոր ձեռքբերումը՝ ՀՀ-ում համաշխարհային ճանաչում ունեցող՝ հոլշտին, շվից և սիմենթալ ցեղերի գենոֆոնդի ձևավորումն է և այդ ցեղերի տեղական վերարտադրության կազմակերպումը, ինչը թույլ կտա՝ ինչպես մաքուր բուծման միջոցով բազմացնել այդ կենդանիները, այնպես էլ այդ ցեղերի գենոֆոնդն օգտագործել կովկասյան գորշ ցեղի փոխմային և մթերապուր հարկանիշները կարգավորելու համար: Ներկայումս ՀՀ-ում ներկրված կենդանիներից և դրանց սերնդից տարեկան սրացվում են շուրջ 1500 գլուխ բարձրարժեք հորթեր, որոնց մի մասով փոխարինվող սուբյեկտները կազմակերպում են իրենց նախիրների վերարտադրությունը, իսկ մյուս մասը վաճառում հանրապետության այլ ֆերմերային փոփոխությունների՝ փոխմասեցնելու աշխատանքներում օգտագործելու համար: Ծրագիրը շարունակվում է: 2014 թվականի փոխմային երկնքների ձեռքբերման գործընթացը սկսվել է:

ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՀՄԱՐ

ՈՒՍՈՒՅՈՒՄ ՈՒՍՈՒՅԱՆՈՂՆԵՐԻՆ

Սյունիքի մարզի ֆերմերների համար տարեկան կազմակերպվում է 100-ից ավելի սեմինարներ, որոնց թեմաների ընտրության հարցում ամենից առաջ կարևորվում է դրանց պահանջարկը: Տարբեր համայնքներ կատարած այցելությունների ընթացքում ՉԿՄԿ-ի գյուղատնտեսության խորհրդատուները, մասնագետները ճշգրտում են առավել հետաքրքրություն ունեցող թեմաները, կազմակերպում ուսուցումներ, դաշտային օրեր, փրամադրում խորհրդատվություն գյուղացիական փոփոխություն վարողներին:

Մարզային կենտրոնի խորհրդատուների համար Գյուղատնտեսության աշակերտության հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ) կողմից յուրաքանչյուր տարի կազմակերպվում են ուսուցումներ, որոնք անցկացնում են հիմնականում հրավիրված գիտնականներ, դասախոսներ: Օրերս այդօրինակ ուսուցում կազմակերպվեց Գորիսում, որին մասնակցում էին ԳԱՄԿ-ի մասնագետները, Կապանի, Մեղրիի, Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների խորհրդատուները:



ԳԱՀԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արշալույս Հայրապետյանը, ողջունելով սեմինարի մասնակիցներին՝ նշեց, որ նմանապիպ ուսուցումներ կազմակերպվում են նաև հանրապետության այլ մարզերում և նպատակ ունեն բարձրացնել ուսուցանվողների հմտությունները:

«Գրա համար մենք ներգրավում ենք գիտնականներին, փորձառու մասնագետներին, որպեսզի նրանք մեզ ներկայացնեն նաև գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ամենաարագ նորությունները, փոփոխությունները, դեղամիջոցները»:
 «Կարող ֆիլի և լուկի ցեղերի նմանություններն ու տարբերությունները, ըստ կենսաբանական առանձնահատկությունների», «Գյուղատնտեսական կենդանիների արյան ինվազիոն հիվանդությունները», «Խաղողի վազի, կորիզավոր և հնդավոր պղպղապեղի հիմնական հիվանդությունները» և այլ թեմաներով դասախոսություններ կարդացին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ամբիոնի վարիչ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը: Դասընթացավարները սեմինարի մասնակիցներին տրամադրեցին նաև ուսուցողական նյութեր, որոնք ԳԱՄԿ-ի խորհրդատուները կօգտագործեն համայնքներում ուսուցումներ կազմակերպելու ընթացքում: Քննարկված հարցերի շուրջ դասընթացավարներին ուղղվեցին նաև իրենց հետաքրքրող հարցեր:

1 ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԱՆՀՐԱՄԵՆՏ ԾՐԱԳՐԵՐԸ

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի փոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր»: Ծրագրի իրականացմանը 2015 թվականին նախատեսվում է ուղղել 1 մլրդ 163 մլն դրամ: 2015 թվականին բյուջեի նախագիծը ենթադրում է գյուղացիական տնտեսություններին տրամադրվող սուբսիդավորման 50 փոկոսի աճ՝ հասցնելով այն վարկերի փոկոսադրույքի 6 փոկոսային կետի և 33 2014 թվականի պետական բյուջեով հաստատված 872.5 մլն դրամի դիմաց 2015 թվականին հարկացնել 1 մլրդ 163 մլն դրամ: Վարկերի փոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի հանրապետության 915 համայնքներում: Կուսակցությունների փոկոսադրույքի 6 փոկոսային կետին համարժեք մասը: Ծրագրի իրականացմամբ վարկերի մատչելիության բարձրացումը հնարավորություն կտա լուծել գյուղատնտեսությունում տնտեսավարողների առջև ծառայած մի շարք խնդիրներ, նախադրյալներ կստեղծվի արտադրության ծավալների ավելացման և ոլորտի զարգացման համար:

«Անտառապահական աշխատանքների ծրագիր»: 2015 թվականին ծրագրի իրականացման է նախատեսվում ուղղել 1 մլրդ 201 մլն 200 հազ. դրամ: Կիրականացվի ավելի քան 344.2 հազ. հեկտար անտառային տարածքների պահպանություն: Պետական բյուջեով նախատեսված միջոցներն ամբողջությամբ կուղղվեն անտառային տնտեսության աշխատողների աշխատավարձի ապահովմանը: Վերջին տարիներին, ծրագրի իրականացման արդյունքում, էականորեն կրճատվել են անտառների գրանցված ապօրինի հատումները ու անտառային հրդեհները:

«Անտառային պետական մոնիթորինգի իրականացման ծրագիր»: Վերջինիս նախատեսում է ուղղել 54 մլն 600 հազ. դրամ: Ծրագիրն ուղղված է հանրապետությունում անտառների ապօրինի հատումների, բնափայտի անօրինական տեղափոխման, իրացման, անտառածածակ տարածքների, բնափայտի պաշարների, ինչպես նաև 70.0 հազ. հա արգելոցների ու ազգային պարկերի մասնակի ուսումնասիրություններ և դիտարկումներ: Պետական բյուջեով նախատեսված միջոցներից 39.3 մլն. դրամը ուղղվում է աշխատողների աշխատավարձին, իսկ 15.3 մլն դրամը՝ կազմակերպության ծախսերին:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողագործողներին, ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մատչելի գներով տրամադրման ծրագիր»: Վերջինիս իրականացմանը նախատեսում է ուղղել 1 մլրդ 829 մլն 400 հազ. դրամ, որից՝ սուբսիդավորումը կազմում է 1 մլրդ 596 մլն դրամ, այդ թվում՝ ազոտական պարարտանյութի 1 մլրդ 238 մլն 700 հազ. դրամ, ֆոսֆորական պարարտանյութի 211 մլն 600 հազ. դրամ և կալիումական պարարտանյութի 145 մլն 700 հազ. դրամ, իսկ տեղափոխման ծախսերը՝ 233 մլն 400 հազ. դրամ: Հաշվարկը կատարված է՝ հիմք ընդունելով 2014 թ. իրականացված ծրագրի ծավալները, որոնք սակայն, 33 մարզպետարաններից ներկայացված վճարունակ պահանջարկի հիման վրա, կարող

են փոփոխության ենթարկվել: Ներկայումս հանրապետության մարզպետարաններից պահանջարկը հավաքագրվում է: Ծրագրով նախատեսվում է՝ գյուղատնտեսական հողագործողներին մատչելի գներով մինչև 40000 տոննա ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի տրամադրում, ընդ որում՝ ազոտական պարարտանյութի 50 կգ զանգվածով մեկ պարկը կտրամադրվի 6000 դրամով, իսկ ֆոսֆորական և կալիումականը 7000-ական դրամով: Ծրագրից հնարավորություն ունեն օգտվելու հանրապետության գյուղատնտեսությունում բոլոր տնտեսավարողները:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողագործողներին՝ դիզելային վառելանյութի մատչելի գներով տրամադրման ծրագիր»: Վերջինիս իրականացմանը նախատեսում է ուղղել 1 մլրդ 260 մլն 600 հազ. դրամի սուբսիդիա: Ծրագրով նախատեսվում է՝ գյուղատնտեսական հողագործողներին մատչելի գներով՝ 1 լիտրը 350 դրամով մինչև 14.3 մլն լիտր դիզելային վառելանյութի տրամադրում: Տվյալ ծրագրից նույնպես հնարավորություն ունեն օգտվելու հանրապետության գյուղատնտեսությունում բոլոր տնտեսավարողները: Նշված է նախորդ ծրագրով ամբողջությամբ բավարարվում է հանրապետության մարզերի գյուղատնտեսությունում տնտեսավարողների դիզելային վառելանյութի և հանքային պարարտանյութերի պահանջարկը՝ շուկայականից էականորեն ցածր գներով: «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի փոկոսադրույքների սուբսիդավորում», «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողագործողներին՝ ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մատչելի գներով տրամադրում», «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողագործողներին, դիզելային վառելանյութի մատչելի գներով տրամադրում»: Երեք ծրագրերի գծով՝ 2015 թվականի բյուջեի նախագծով, նախատեսվում է հարկացնել՝ 4 մլրդ 19 մլն 600 հազ. դրամի սուբսիդիա: Նշվածից բացի, հանրապետության անասնապահության զարգացման համար կարևորվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագիրը: Նախատեսվում է 2015 թվականին ուղղել 2 մլրդ 464 մլն 800 հազ. դրամի միջոցներ: Գործող ծրագրի շարունակման համար 2015թ. նախատեսվում է հարկացնել 958 մլն 840 հազ. դրամ: Ծրագրի նպատակն է՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներին՝ հեռավար արտադրության անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեզարդացված արտադրության վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման միջոցով: Մասնավորապես, ծրագրի շրջանակներում 2015 թվականին նախատեսվում է 19 համայնքում կառուցել շուրջ 52 կմ ջրարբիացման համակարգ, տեղադրել 52 խմոց, որը լիարժեք օգտագործելի կարծնի շուրջ 37 հազար հա արոտավայր: Համայնքների արտադրագործողների կոոպերատիվների համար ձեռք կբերվի շուրջ 230 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 40 միավոր տրակտոր: Ծրագրով նախատեսված 6 մարզերից 2-ում (Պեղարքունիք և Տավուշ) 2015 թվականին կստեղծվեն անասնաբուժական սպասարկման կենտրոններ, որոնք անասնաբուժական, արհեստական սերմավորման ծառայություններ կմատուցեն անասնապահական տնտեսություններին:

ներին: Ծրագրի իրականացումը կնպաստի բնական կերհանդակների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, անասնապահության զարգացմանը, տնտեսությունների եկամուտների ավելացմանը: Ծրագիրը կխթանի նաև գյուղատնտեսությունում կոոպերացիայի զարգացմանը: 2015թ. կմեկնարկի Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիրը: Ծրագրի իրականացման համար 2015թ. նախատեսվել է հարկացնել 1 մլրդ 259 մլն 400 հազ. դրամ: Ծրագիրը կշարունակի համայնքներում իրականացնել արտադրության արդյունավետ կառավարման և անասնապահության զարգացմանն ուղղված ծրագրերը և կիրականացվի հանրապետության 8 մարզերում (Շիրակ, Արարատ, Լոռի, Տավուշ, Պեղարքունիք, Սյունիք, Վայոց ձոր և Կոտայք): Նախատեսվում է մինչև 2019թ. ծրագիրն իրականացնել ևս 100 համայնքում, որից՝ 25-ը կմեկնարկի 2015 թվականին: Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի շրջանակներում իրականացվելու են նաև արժեշտի զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք կնպաստեն գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման, իրացման խնդիրների լուծմանն ու կատարելագործմանը: Նշվածի հետ մեկտեղ, 33 պետական բյուջեի միջոցներով նախատեսված ծրագրերից բացի, կիրականացվեն այլ ծրագրեր և միջոցառումներ՝ ուղղված ոլորտի առջև ծառայած հետևյալ առաջնահերթ խնդիրների լուծմանը: Դրանք են՝ հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը, անասնաբուժության փոհմային գործի կազմակերպումը, մասնավորապես՝ գյուղատնտեսական կենդանիների փոհմային և մթերատու հատկանիշների բարելավումը, արհեստական սերմավորման գործընթացում արդյունավետ մեխանիզմների և տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում կոոպերացիայի, տնտեսավարողների համատեղ գործունեությունը խթանելու մեխանիզմների ներդրման միջոցով, արտադրության արդյունավետության բարձրացումը:

«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» 33 օրենքի ընդունումը: Առաջնահերթ խնդիր է նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար նախադրյալների ստեղծումը և քայլերի ձեռնարկումը, մասնավորապես փորձնական ծրագրի իրականացումը: Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության, մասնավորապես՝ մատչելի պայմաններով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման աշխատանքների շարունակումը: Գյուղատնտեսության օրենսդրական դաշտի բարելավումը, մասնավորապես՝ «Գյուղի և գյուղատնտեսության մասին» 33 օրենքի նախագծի լրամշակումը և ընդունումը:

Այսպիսով՝ հակիրճ ներկայացվեց 2015 թվականի 33 պետական բյուջեի նախագծով 33 գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացման համար նախատեսված առաջնահերթ անհրաժեշտ ծրագրերը, որոնք նպատակաուղղվելու են գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ճյուղի մրցունակության բարձրացմանը, արդյունքում ոլորտի կայունացմանն ու զարգացմանը, պարենային անվտանգության ապահովմանը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԿԱՎԵԼԱՆԱՆ ՈՐԱԿՅԱԼ ՄՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

«Լոռու մարզի Գուգարքի տարածաշրջանում մսի մթերման կետի ստեղծման և դրա հիման վրա՝ սպանդանոցի կառուցման անհրաժեշտությունն օրեցօր ավելի է մեծանում, քանի որ անասնապահությունը զարգացման մեծ միտում ունի»,-ասում է Մարգահովիտի գյուղապետ Սամվել Անանյանը:

Գյուղապետը ևս ստեղծել է գյուղացիական փոքր տնտեսություն, զբաղվում է ընտանեկան ֆերմերությամբ, խնամում է 10 գլուխ կով, նույնքան երկնյներ և բոմբակի ցլիկներ: «Ժամանակակից սպանդանոցի առկայության դեպքում կլուծվի նաև իրացման խնդիրը, քանի որ որակյալ մսի պահանջարկը միշտ էլ կա»,- նշում է գյուղապետը: «Բացի այդ, այդպիսով վերջ կդրվի սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններում կատարվող բակային մորթին, որի պարագայում որակյալ միս ստանալու մասին խոսք անգամ չկարող»,- հավելում է նա: Մարգահովիտի աջքի է ընկնում զարգացած անասնապահությամբ, քանի որ ալպյան գոտում տեղակայված արոտավայրերը



բարձրակարգ մսի արտադրության լայն հնարավորություն են ընձեռում: Ի դեպ, ճյուղի զարգացմանը նպաստում է նաև կաթի վերամշակման գործում մասնագիտացված «Վարդանուշ» ՍՊԸ, որի գործու-

նություն արդյունքում բարձրացել է կաթի մթերման գինը: Զուգահեռաբար բարելավվում են նաև անասնազխաքանակի փոհմային հատկանիշները, նախիրները համալրվում են բարձր մթերատվություն ունեցող կենդանիներով: Գյուղում առկա է 2100 գլուխ խոշոր, 1600՝ մանր եղջերավոր անասուն, 200՝ խոզ: «Մսի իրացման խնդիր լուծումն, անշուշտ, կնպաստի անասնազխաքանակի ավելացմանը, հետևաբար կավելանան նաև որակյալ, համային հատկանիշներով աչքի ընկնող մսի արտադրության ծավալները, ինչի պահանջարկը մեծ է թե՛ մեր երկրում և, թե՛ արտերկրում»,- հավելում է գյուղապետը: Բնակիչները ևս նպատակահարմար են համարում անասնապահական ճյուղերի զարգացումը, քանի որ արդյունավետությունն անհամեմատ բարձր է: Զայռը են ձեռնարկվում սեփական կերտնտեսության խնդրի կարգավորման ուղղությամբ, որը կնպաստի մսի ինքնարժեքի իջեցմանը:

ՆԵԼԼԻ Սահակյան

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՉՐ ԲԵՐՔԻ ԵՐԱՇԽԻՔ

Կայուն և օրգանական գյուղատնտեսությունը մեծ տարածում է գտել մեր օրերում: Մարդիկ սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել իրենց առողջությանը և չեն ցանկանում իրենց և շրջակա միջավայրը թունավորել քիմիկատներով: Դրանց ոչ ճիշտ օգտագործումն առաջ է բերում մի շարք առողջական և բնապահպանական խնդիրներ: Օրգանական պարարտանյութերի շարքում իր ուրույն տեղն ունի կենսահումուսը:

Կենսահումուսը վերականգնում է հողի բերրիությունը, լավացնում կառուցվածքը, ավելացնում է հողի օրգանական զանգվածը, պարունակում է բույսերի համար մատչելի սննդատարրեր, հարուստ է ածխի հորմոններով, ամինաթթուներով, աճը խթանող միկրոֆլորայով, զերծ է պաթոգեններից և թունավոր քիմիկատներից, կանխում է հողի պնդեցումը և երոզիան, վերացնում հողի ալկալիությունն ու աղակալվածությունը, մեծացնում հողի՝ ջուրը պահելու կարողությունը: Մասնագետների ուսումնասիրությունների արդյունքում՝ 1 տ կենսահումուսը պարունակում է, միջին հաշվով, 45 կգ սննդատարրեր:



Վերջերս ArmProd EXPO ցուցահանդեսին մասնակցում էր նաև ORWACO հայկորվեզական համատեղ ձեռնարկությունը: «2013 թ. ընկերությունը կարողացել է արտադրական ծավալներն ավելացնել՝ կենսահումուսի և կենսահեղուկի տեսքով: Մեր նպատակն է՝ փակել բնապահպանական շղթան և նպաստել անթափոն արտադրությանը: Այսինքն՝ փոխակերպել օրգանական թափոնները բարձրարժեք օրգանական պարարտանյութերով», - նշում է ORWACO-ի գործադիր տնօրեն Լուսինե Նալբանդյանը: Կենսահումուսի արտադրությունն իրականացվում է՝ ինչպես անհատական տնտեսությունների մակարդակով, այնպես էլ՝ արտադրական ծավալներով: Հայաստանում արտադրված և փաթեթավորված կենսահումուսը, ըստ Լուսինե Նալբանդյանի, օժտված է բազմաթիվ օգտակար հատկություններով. այն բարձրացնում է սերմերի ծլունակությունը, նպաստում է կտրոնների արագ արմատակալմանը, խթանում արմատագոյացմանը, սածիլների, բույսերի արագ աճին,



զարգացմանը, միաժամանակ բարձրացնում բերքատվությունը, բույսերի դիմադրողականությունը, պաշտպանում է բույսերին վնասատուներից և այլ հիվանդություններից: Տնօրենը նշեց, որ, այս առումով, հակրապետության գրեթե բոլոր մարզերում կատարվել են ուսումնասիրություններ, փորձացուցադրություններ և հետազոտական աշխատանքներ: Թե՛ ցանքատարածություններում, թե՛ ջերմոցային տնտեսություններում արդյունքը գոհացրել է ֆերմերներին: Խոստումնալից բերքի քանակ, վեգետացիայի կրճատում և տնտեսապես գոհացուցիչ արդյունք: ArmProd EXPO ցուցահանդեսի ընթացքում շատերն էին հետաքրքրված ORWACO-ի արտադրանքով: Նորվեգացի գործընկերներների օժանդակությամբ հաջողվել է արտադրական թափոնների վերամշակումից ստանալ բարձրարժեք օրգանական պարարտանյութեր:

Լիանա Շախնազարյան

ԳԱՎԱՌՈՒՄ՝ ԹԱՅՎԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Վերջերս «Վորլդ Վիժն Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրի գրասենյակի աջակցությամբ և Բանջարաբուսության և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի առաջադարձ գիտաշխատող, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Կարինե Սառիկյանի խորհրդավորությամբ, Գեղարքունիքի մարզում, բաց դաշտի պայմաններում, առաջին անգամ կիրառվել է թայվանական տեխնոլոգիայով բանջարային մշակաբույսերի աճեցման նոր տեխնոլոգիա՝ մուլչապարման, ցցափայտերի

հաս, Վարդերես, քաղցր պղպեղի՝ Նափալի, էմիլի, Միլի և կծու պղպեղի՝ Հայկական գեղեցիկ, Հայկական տեղական, Հայար, Գիտա սորտերի սածիլները և գոհ մնացել ստացված արդյունքներից: Սարիբեկ Ղարիբյանը, մասնագետի խորհրդավորությամբ իր հողատարածքում գարնանը պարարաստել է թմբեր, անցկացրել կաթիլային ոռոգման խողովակներ. մուլչապարման համար փռել է պոլիէթիլենային թաղանթներ, վերջինի վրա բացել է անցքեր և իրականացրել սածիլման աշխատանքները: Նոր դուրս եկած սածիլների կողքին բրգաձև տե-



և կաթիլային ոռոգման միջոցով:

Այդ աշխատանքները կազմակերպել է «Վորլդ Վիժն Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրի գրասենյակի ներկայացուցիչ Արծրուն Ալեքսանյանը: Նրա անմիջական նախաձեռնությամբ, թայվանական տեխնոլոգիայի փորձացուցադրությունը կատարվել է ֆերմեր Սարիբեկ Ղարիբյանի տնտեսությունում:



Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ այս տարի էլ, ՄԱԿ-ի որոշմամբ, հայտարարվել է ֆերմերների ընդհանրացի տարի, ուստի համապատասխան ծրագրի շրջանակներում «Վորլդ Վիժն Հայաստան» Գավառի ՏԶԾ-ն ՀՀ ԳՆ Բանջարաբուսության և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնից ձեռք է բերել լուլիկի, սմբուկի, քաղցր ու կծու պղպեղի տեղական սորտերի սածիլներ և փրամարդեղ ֆերմերի ընդհանրացիլ թայվանական նոր տեխնոլոգիայով մշակելու համար: Չնայած Գավառի տարածաշրջանի եղանակային պայմաններին՝ մասնավորապես ցրտահարության և կարկտահարության դեպքերին, պտուղները հասցրել են հասունանալ և առաջ բերել վարձատրել իր գործին նվիրված մշակին:

Պահպանվել են ցցափայտեր: Տեխնիկական այս բոլոր միջոցները նույնպես տրամադրվել են «Վորլդ Վիժն Հայաստան» Գավառի ՏԶԾ-ի կողմից: Մշակաբույսերի սնուցման համար հիմնականում օգտագործվել է Ազոնեովիպ 1 կենսապարարտանյութը, ինչը, մասնագետների գնահատմամբ, գոհացուցիչ արդյունք է ունեցել և նպաստել բանջարեղենի բնականոն աճին: Ցցափայտերի բրգաձև կիրառումը բույսերի աճի համար ապահովում է բավարար լուսավորություն, բույսերը կապվում են փայտերին և բարձրացվում վեր՝ զերծ պահելով դրանք հողից դիպչելուց և հնարավոր հիվանդություններով վարակվելուց:

Ծրագրի շրջանակներում կենտրոնի աշխատակից Կարինե Սառիկյանը համաձայնվել է այս տարի խորհրդավորություն իրականացնել նաև Գավառում և իր փորձը փոխանցել ֆերմերներին: Դասընթացի մասնակից ֆերմեր Սարիբեկ Ղարիբյանը, Հացահատիկ թաղամասի իր տնտեսությունում կիրառելով թայվանական տեխնոլոգիան, մշակել է լուլիկի՝ Անահիտ, Ռեներեսանս, Ժամնա, Ռուբինա, Զեյթուն, սմբուկի՝ Կարինե, Հայկական վաղա-

դարձվել են ցցափայտեր: Տեխնիկական այս բոլոր միջոցները նույնպես տրամադրվել են «Վորլդ Վիժն Հայաստան» Գավառի ՏԶԾ-ի կողմից: Մշակաբույսերի սնուցման համար հիմնականում օգտագործվել է Ազոնեովիպ 1 կենսապարարտանյութը, ինչը, մասնագետների գնահատմամբ, գոհացուցիչ արդյունք է ունեցել և նպաստել բանջարեղենի բնականոն աճին: Ցցափայտերի բրգաձև կիրառումը բույսերի աճի համար ապահովում է բավարար լուսավորություն, բույսերը կապվում են փայտերին և բարձրացվում վեր՝ զերծ պահելով դրանք հողից դիպչելուց և հնարավոր հիվանդություններով վարակվելուց: Պոլիէթիլենային թաղանթի օգտագործումը հողի ջերմաստիճանը գարնանը բարձրացնում է 3-4 աստիճանով, ինչն էլ նպաստում է ավանդական սեզոնից ավելի շուտ կատարել սածիլի տնկման աշխատանքները: Իսկ ահա, կիրառված ոռոգման համակարգը, յուրաքանչյուր ջրման ընթացքում, օգտագործելով ընդամենը կես լիտր ջուր՝ մշտապես խոնավ է պահում հողը: Այս ամենը գալիս է ապացուցելու, որ Գեղարքունիքի մարզի եղանակային պայմաններում անգամ կարելի է աճեցնել բազմապիսի բանջարեղեն և առաջ բերել ստանալ:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ԿՈՈՊԵՐԱՑԻՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԵՎԱՄՈՒՏՆԵՐՆ ՈՒ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

Կոոպերատիվներում միջոցները ձևավորվում են սեփական և փոխառու աղբյուրների հիման վրա: Սովորաբար, այն պայմանավորված է կոոպերատիվի տեսակով և կարգավիճակով: Առևտրային /արտադրական/ կոոպերատիվներում միջոցները ձևավորվում են՝ արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ամորտիզացիոն հատկացումների, կոոպերատիվի անհատական և կոլեկտիվ անդամների, այլ ձեռնարկությունների և պայմանագրային հիմունքներով կոոպերատիվում աշխատողների կողմից փոխադրվող և այլ մուծումների, ինչպես նաև՝ ունեցած գույքի վաճառքի և արժեթղթերի վաճառքից ստացված միջոցների հաշվին:

Կոոպերատիվի գործունեությունից ստացված արդյունքներից /համախառն արդյունք/ նախ՝ փոխհատուցվում են կատարված ծախսերը, կատարվում բանկերի ու բյուջեի պարտավորությունները, սահմանվում արտադրության ընդլայնման և աշխատանքի վարձարության ծավալները:

Կոոպերատիվի եկամտի բաշխումը՝ ուղղված արտադրական և սոցիալական զարգացմանը, աշխատանքի վարձարությանը, սահմանվում են կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ:

Կոոպերատիվն ինքնուրույն սահմանում է ֆոնդերի և պահուստների ձևավորման և օգտագործման կարգը, չափը և տեսակը: Պետական կարգավորման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու չեն սահմանելու ֆոնդերի ձևավորման նորմատիվները:

Որպես կանոն՝ պետական բյուջե գանձվող հարկերի, սոցիալական ապահովագրության վճարների, ինչպես նաև նյութական ծախսերի փոխհատուցումից հետո կոոպերատիվը բաշխում է մնացած միջոցները՝ ըստ հետևյալ հիմնադրամների՝

- ապահովագրական հիմնադրամ, որը նախատեսված է արտակարգ դեպքերի համար անհրաժեշտ ծախսերի վճարման, կոոպերատիվի պարտքերի վճարման կամ դրա լիկվիդացման համար,
- զարգացման հիմնադրամ, որը նախատեսված է արտադրության զարգացման համար կառույցների շինարարություն և վերանորոգում, սարքավորումների, փրանսպորտային միջոցների գնում, նոր

տեխնոլոգիական սարքերի տեղադրում և այլն,

• սոցիալ-կենցաղային և սոցիալ-մշակութային հիմնադրամ, որը ծառայում է կոոպերատիվի անդամների սոցիալ-կենցաղային և սոցիալ-մշակութային կարիքների բավարարման համար,

• բարեգործական հիմնադրամ, որը նախատեսված է համայնքի զարգացման, փարբեր միջոցառումների իրականացման և անձանց անհատույց աջակցության համար,

• նյութական խթանման հիմնադրամ, որը ներառում է կոոպերատիվի անդամների միջև բաշխմանը ենթակա միջոցները՝ բարձր ցուցանիշներ ապահոված անձանց խրախուսման նպատակով,

Կոոպերատիվը, ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է սահմանել հիմնադրամների այլ տեսակներ ու նորմատիվներ:

Նշված ֆոնդերի և հիմնադրամների համար կարևոր նախադրյալն անհրաժեշտ է կամուրանների ապահովումն է, որի հիմնական աղբյուրներն են հանդիսանում՝

- արտադրական գործունեության արտադրանքի իրացումից ստացված եկամուտները,
- փարբեր ծառայությունների դիմաց ստացված հասույթը,
- հաշվեկշռային արժեքից բարձր գնով միջոցների իրացումից ստացված գումարները,
- բանկերում պահված գումարներից ստացված եկամուտները,
- դոնոր կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի արդյունքում ստեղծված միջոցները,
- օգնությունների ձևով ստացված գումարները:

Կոոպերատիվների եկամուտներ կարող են ապահովել նաև կոոպերատիվի կողմից թողարկվող արժեթղթերը: Նման գործունեության փորձ կա այն երկրներում, որտեղ ստեղծված կոոպերատիվները և միավորումներն ունեն հզոր արտադրական և նյութական ռեսուրսներ: Նրանք ավելի ակտիվ գործունեություն ծավալելու, ներդրումներ ներգրավելու համար թողարկում են արժեթղթեր, միայն պայմանով,



Եթե այն իրականացվում է լիազոր մարմնի թույլտվության հիման վրա: Ընդ որում կոոպերատիվների և դրանց միությունների թողարկած արժեթղթերը վաճառվում են միայն կոոպերատիվի անդամներին, պայմանագրային հիմունքներով աշխատող անձանց և ձեռնարկություններին:

Արժեթղթերի ձեռք բերման համար հատուկ արտոնություններ են փորձում կոոպերատիվի անդամներին: Կոոպերատիվը կամ կոոպերատիվների միությունը հաստատում է դրանց նմանալ արժեքը, որն անփոփոխ է մնում արժեթղթերի շրջանառության ողջ ընթացքում, ինչպես նաև արժեթղթերի վճարման կարգը՝ մեկ փարվա կտրվածքով: Տարեկան եկամտի դրույքը կարող է ուղղվել կոոպերատիվի ընդհանուր ժողովի կողմից, արժեթղթերի սեփականատերերի մասնակցությամբ՝ կախված նրանց եկամուտների մակարդակներից և կոոպերատիվի առջև ծառայած խնդիրներից:

Արժեթղթերի ընդհանուր արժեքը, որպես կանոն, չպետք է գերազանցի փարբերական համախառն եկամտի չափը: Արժեթղթերի սեփականատերը ստանում է դիվիդենդ /շահաբաժին/ ըստ դրա արժեքի՝ փարվա եկամուտների գումարից ելնելով:

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՁՄԵՌՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Մեղուների պահվածքի և խնամքի ամենածանր ու պարասխանաբու շրջանը ձմեռն է: Մեղվաընտանիքների անկումը հիմնականում լինում է այդ ժամանակ: Ընդունված է, որ հոկտեմբերից մինչև մարտ ամիսը, եթե անկումը հասնում է 5%-ի, ապա դա բնականոն երևույթ է: Իսկ եթե ի հայտ եկավ վարոսարող հիվանդությունը, անկման արդյունք որոշ մեղվանոցներում հասավ մինչև հարյուրի:

Դրա պատճառը՝ ոչ թե հիվանդության անբուժելիությունն է, այլ մեղվապահի չխնամքը կամ այն պահանջների անտեսումը, որոնք պետք է օգտագործվեն մեղրաքամից հետո՝ մեղուների հաջող ձմեռման համար: Այդ պահանջները հիմնականում հետևյալն է՝ մոր հայտնաբերումը մեղրաքամից հետո, ճիշտ և ժամանակին մեղվաընտանիքների բնի խտնաբերումը, մեղրով շրջանակների ճիշտ դասավորումը բնում, մեղվաընտանիքների բուժումը վարոսարող հիվանդության դեմ, կերակրման ստուգումն ընտանիքներում և, եթե պահանջվում է՝ դրա լրացումը, նոգեմատոզ հիվանդության դեմ դեղամիջոցներով կանխարգելիչ միջոցառումները, մեղուների ձմեռման դրական և բացասական վիճակների առկայությունը ձմեռանոցում և ձմեռանոցից դուրս:

Եթե մեղվանոցում չկա պահուստային բեղմնավորված մայր, բռնածու ընտանիքը պետք է վերացվի: Դրա համար փետակը մեղուների հետ հանում են մեղվանոցից, լավ ծխահարում, որի հետևանքով մեղուները մեղրապարկը լցնում են մեղրով: Դրանից հետո մեղուներին թափ են տալիս մեղրահացերից: Մեղուները թռչում են իրենց նախկին փետակի տեղը: Չգտնելով իրենց փետակը՝ դրանք մտնում են կողքի փետակների մեջ: Լցված մեղրապարկերով մեղուներին ուրիշ փետակների մեղուներն ընդունում են՝ ստորկացնելով միայն այն մեղուներին, որոնք բռնածու են և ձվադրում են:

Մեղվի ընտանիքների բների նեղացումը սկսում են՝ հանելով դափարկ և կիսակառուցված մեղրահացերը: Բաց գույնի, նոր կառուցված մեղրով մեղրահացերը տեղավորում են բնի կողքերում: Զիչ պարունակությամբ մեղրահացերը տեղավորում են միջնատախտակից հետո՝ քերելով սերեկած մեղրը: Այդպիսի մեղրահացերից մեղուն մեղրը տեղափոխում է բնի մեջ: Մեղրահացերը, որոնք լցված են մեղրով և կիսով չափ սերեկած, տեղավորում են բնի կենտրոնում: Լավ են համարվում այն մեղրահացերը, որոնց ներքևի մասը դափարկ է կամ բջիջները կիսով չափ են լցված մեղրով: Այդպիսի մեղրահացերը ավելի լավ են պահում փայտային, և մեղուները դրանց վրա ավելի հաջող են կծիկ կազմում: Ձմեռվա պաշարի լրացումից առաջ պետք է կազմակերպվի մեղվի ընտանիքների բուժումը վարոսարողի դեմ:

Յայտնի է, որ մեղրաքամից հետո գզալի չափով իջնում է մոր ձվադրումը: Վարոսարողի փոքր զրկվում է թրթուրների վրա նորից ձվադրելու հնարավորությունից: Կրճափում է նոր ծնվող տղերի քանակը, որոնք կարող են ձմեռել մեղուների հետ՝ տեղավորվելով որովայնի սեզմենտների արանքում և մյուս փարի և սերունդ տալ: Եթե կերակրումն անցկացնեն բուժումից առաջ, կբարձրանա մոր ձվադրումը, որի հետևանքով կավելանան նոր ծնված տղերը: Բուժման արդյունավետությունը կիջնի, կբարձրանա դեղամիջոցի քանակությունը մեղրում: Վարոսարող բուժելու համար կան հետևյալ դեղամիջոցները՝



Ֆումիսան, պոլիսան, ամիպոլ-S, բիպին-S, թրթնջկաթոն, բիվարոլ, ապիդեզ, մրջնաթոն, տեդա, ապիտակ, վեդֆոր, բիպին, ակարասան, փանգ: Եթե մեղվի ընտանիքում կան ձվեր և թրթուրներ, չի կարելի օգտագործել բիպին կամ բիպին-S, քանի որ այդ դեղամիջոցը ոչնչացնում է դրանց:

Ֆումիսան կամ ամիպոլ-S: Շպոնի շերտիկներ են ներծծված դեղով, հերմետիկ փաթեթավորված փայլաթիթեղով: Ամիպոլ-S-ը օգտագործելուց առաջ փուլը բացում են, շերտիկի ծայրին դակիչի կամ շաղափի միջոցով անցք են բացում, որից հետո ապամի մաքրիչ փայտիկը անցկացնելով անցքի միջով՝ շերտիկն իջեցնում է 3-րդ ու 4-րդ մեղրահացերի արանքը՝ բնի կենտրոնում: Եթե մեղուները միջին ուժի են կամ էլ

ՀՈՒՆՆԱԿ



ՄԻՐՈՎ ԵՎ ՆՎԻՐՈՒՄՈՎ

Լրացավ «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սերմնաբուծության բաժնի առաջադարձ գիտաշխատող, փորձառու ագրոնոմ Զեմմա Եփրեմյանի ծննդյան 80 տարին:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետում: Զեմմա Եփրեմյանը գիտագործական աշխատանքները շարունակել է Երկրագործության գիտահետազոտական ինստիտուտի սերմնաբուծության բաժնում: Ասպիրանտուրայում ուսումն ավարտելուց հետո, պաշտպանելով գիտական թեզ, ստացել է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Մինչ օրս աշխատում է «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սերմնաբուծության բաժնում՝ որպես առաջադարձ գիտաշխատող: Գյուղատնտեսության ոլորտում ունեցած նրա գիտելիքներն օգնել են շատերին՝ լուծելու ագրոնոմիայի բնագավառի մի շարք խնդիրներ: Նրա իմաստավորված կյանքի ամբողջ ուղին անմնացորդ նվիրում է հայրենի գյուղատնտեսությանը: Ակտիվ մասնակցություն է ունեցել հանրապետությունում գործնական սերմնաբուծության կազմակերպման գործին, հա-

ցազգի մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի սկզբնական տնկարանների ստեղծմանը, էլիտային սերմերի արտադրությանն ու բազմացմանը: Հեղինակել է շուրջ 90 գիտական հոդված: Համահեղինակ է աշխատանքային ցորենի՝ 9, սիսեռի՝ 4 և սոյայի 1 սորտի:

Երիտասարդական ավյունով, այսօր էլ՝ ամենայն խանդավառությամբ և առանձնահատուկ նվիրվածությամբ, շարունակում է իր աշխատանքը գյուղատնտեսության ոլորտում: Հարգալից և ջերմ վերաբերմունքի, գործնական և մարդկային հարկանիշների շնորհիվ, նա վայելում է շրջապատի սերն ու գնահատանքը: Զեմմա Եփրեմյան անհատականությանն ու քնքուշ կնոջը բնորոշ են պրպտուն մտքի խորաթափանցությունը, իմաստասիրությունը, նրբազգացությունն ու մարդկային վեհագույն շնորհները:

Ոլորտում կատարած երկարամյա և բեղմնավոր աշխատանքի համար, արժանացել է բազմաթիվ պարգևների, իսկ գիտական կենտրոնի հիմնադրման 80-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության պատվոգրով:

Ծննդյան նշանակալի իրադարձության առթիվ, ջերմորեն շնորհավորում ենք հորեյարին, մաղթում քաջ առողջություն, երջանկություն և աշխատանքային նորանոր հաջողություններ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆՎԱՋԵԼ ԵՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՅՆԵՐԸ

«Անտառային պեղական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից անտառային հրդեհների, ինչպես նաև անտառներում ձեռնարկվող հակահրդեհային միջոցառումների վերաբերյալ իրականացվում են դիտարկում-ուսումնասիրություններ և փոխալների հավաքագրում: Ուսումնասիրությունների և հավաքագրված փոխալների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ վերջին երկու տարիների ընթացքում նվազել են անտառներում և անտառային հողերում տեղի ունեցած հրդեհների քանակն ու ընդգրկման մակերեսը:

հրդեհների առաջացման ճնշող դեպքերի մեծամասնությունը պայման է հանդիսացել գյուղատնտեսական հողատեսքերի վրա չոր բուսականության և դաշտերում մնացած ծղոփի ու խոզանի հրկիզումը, ինչպես նաև՝ բնակչության և հանգստացողների անփութությունը, որի ժամանակ չվերահսկվող կրակը՝ հասնելով անտառի փեշին, չոր կլիմայական պայմաններում արագ տարածվում է:

Հրդեհների նվազեցման և արագ արձագանքման համար լուրջ խթան են հանդիսացել.

- ՀՀ գյուղատնտեսության նախարարության քաղաքացիական պաշտպանության և արտակարգ

իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգերի նախապատրաստման հիմնական միջոցառումների փարեկան պլանների համաձայն, մարզերում անցկացվող շտաբային «Անտառային հրդեհների կանխարգելում, հրդեհաշիջում և հետևանքների վերացման կազմակերպում» թեմայով ուսումնավարժանքները, որոնք իրականացվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան կառույցների, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մարզային կառույցների մասնագետների, ՀՀ բնապահպանության նախարարության ԲՊՏ փորձաշարի կառույցների մարզպետարանների, ոստիկանության ստորաբաժանումների ներկայացուցիչների, համայնքների ղեկավարների և այլ շահառուների մասնակցությամբ:


- ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 29-ի N 563-Ա որոշմամբ հաստատված՝ անտառային և այլ բուսածածկ փորձաշարներում հրդեհային անվտանգության բարելավմանն ուղղված հանրապետական ծրագիրն ու անտառային և այլ բուսածածկ փորձաշարներում հրդեհային անվտանգության բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ցանկով նախատեսված դրույթների իրականացումը:

- Անտառատնտեսությունն աշխատակիցների շրջանում բարձրացրել է պատասխանատվությունը և հետևողականությունը՝ հրդեհավտանգ շրջանում իրականացվող շտաբային հերթապահության նկատմամբ:

Անտառներում հակահրդեհային միջոցառումներից բխող աշխատանքների իրականացումը մշտապես գտնվում է ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս.Կարապետյանի ուշադրության կենտրոնում:

Չնայած ոլորտում իրականացված և իրականացվող աշխատանքներին՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անտառային և այլ բուսածածկ փորձաշարներում հրդեհների կանխարգելման և առաջացման ռիսկերի մասին հանրային իրազեկվածության բարձրացման կարիք կա:

«Անտառային պեղական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ



5 ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՁՄԵՌՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ուժեղ են, օգտագործում են 2 շերտիկ՝ 3-4-րդ և 7-8-րդ մեղրահացերի արանքում: Շերտիկները թողնում են փեթակի մեջ՝ 3-25 օր: Տուփի մեջ կան 10 շերտիկներ:

Պուխան: Թերմիկ կարգոնե շերտիկներ են: Օգտագործվում են առավոտյան կամ երեկոյան՝ մինչև մեղվի թռիչքի սկսվելը կամ՝ ավարտից հետո, երբ օդում ջերմաստիճանը 10°C-ից ոչ պակաս է: Պուխանի օգտագործումից առաջ մեղվի փեթակի հատակի վրա՝ մեղրահացերի տակ, տեղավորում են ցանցփոփոսիչ: Պեղք է իմանալ, որ պուխանը ոչ թե սպանում է փղին, այլ՝ շմբեցնում: Առանց փղ-որսիչի, որոշ ժամանակից հետո փղերը կենդանանում են և նորից

անցնում մեղուների վրա: Շերտիկն ամրացնում են լարին, որի երկարությունը 20-30 սմ է, վառում են վերջից և արագ մարում կրակը, շերտիկը սկսում է ծխալ: Այդ վիճակով այն իջեցնում են 1-ին և 2-րդ մեղրահացերի արանքով՝ երկաթե ցանցի վրա: Առաջին և երկրորդ շրջանակների միջև տարածությունը լայնացնում են մինչև 3 սմ: Երկաթե թիթեղի օգնությամբ շերտիկը կարելի է անցկացնել շրջանակների տակ: Փեթակում եղած բոլոր անցքերը և արկանոցը փակում են մեկ ժամով: Եթե շերտիկը լրիվ չի ծխացել, գործողությունը կրկնում են: Մեղվաընտանիքների մշակումը այդ դեղամիջոցով պեղք է ավարտել մեղրաքամից 30

օր առաջ կամ մեղրաքամից հետո:

Քիչիկ-Տ: Դեղնագույն հեղուկ է: Պատրաստվելի մեկ միլիլիտրը լուծում են 2 լ գոլ ջրում /35-40°C/: Լուծույթը լցնում են պլաստմասե շի մեջ, դրա փականի վրա փոքր անցք բացում և մեղուներին ջրում մեղրահացերի արանքով, 1 շրջանակ մեղվի համար՝ 10 մլ ջուր: Գործողությունը կրկնում են 7 օր հետո:

Շարունակելի
Նորակ Հակոբյան
Կենսաբանական գիտությունների թեկնածու
Կարեն Ավետիսյան
Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

Փոխայցելություն Թուրքիա

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՆԵՐՉՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Յեյֆեր Յայաստանի գործընկերը՝ Գյումուշա- նի (Թուրքիա) ազգային կրթական դիրեկտորատը, 2014թ. հոկտեմբերի 19-22-ը հյուրընկալել էր Յայաս- տանի, Բուլղարիայի և Վրաստանի տուրիստական գործակալությունների և տուրիզմի ոլորտի ծառայու- յուններ մատուցողների շուրջ 30 ներկայացուցիչների: Այցը կազմակերպվել էր ԵՄ կողմից ֆինանսավոր- վող՝ «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրա- կանացվում է Յեյֆեր Յայաստանի գլխավորությամբ՝ Յեյֆեր Վրաստանի, Վառնայի տնտեսական գարգաց- ման գործակալության (Բուլղարիա) և Գյումուշանի ազգային կրթական դիրեկտորատի (Թուրքիա) հետ համատեղ:

Զբոսաշրջության ոլորտի ծառայություններ մա- տուցողների և տուրիստական գործակալություննե- ռի տարածաշրջանային խումբը մեկնել էր Թուրքիա՝ բացահայտելու Թուրքիայի գյուղական տուրիզմի առանձնահատկությունները և թուրք գործընկերների հարուստ փորձից սովորելու՝ ինչպես զարգացնել գյու- ղական զբոսաշրջությունը և արդյունավետորեն վարել իրենց՝ տուրիզմի ոլորտին առնչվող բիզնեսը: Այս այցը, ևս մեկ հնարավորություն տվեց մասնակիցներին՝ հա- մագործակցել տուրիզմի ոլորտում ծառայություններ մատուցողների տարածաշրջանային ցանցում 4 երկր- ներից ծրագրում ընդգրկված գործընկերների հետ:

«Այցը շատ տպավորիչ էր ու արդյունավետ: Մենք



այցելեցինք Թուրքիայի այնպիսի տեսարժան վայրեր, ինչպիսիք են՝ Կարաչա քարանձավը, Բայբուրթ Բակ- սի թանգարանը, Այդինթեպ ստորգետնյա քաղաքը, Տրապիզոնի Ուզուն լիճը, Սոււմեյա վանքը, Այասոֆիա եկեղեցին, Ռիզեյի այդեր հարթավայրը, թեյի, տխիլի մշակման և սուշուլի արտադրամասեր, գյուղական հյուրատներ»,- ասաց Յեյֆեր Յայաստանի տնօրեն Անահիտ Ղազանջյանը:

Կատարած այցերը հիանալի հնարավորություն ընձեռեցին տարածաշրջանի զբոսաշրջային գործա- կալություններին և ծառայություններ մատուցողնե- ռին՝ կիսելու իրենց լավագույն փորձը, սովորելու միմ- յանցից և բացահայտելու, թե ինչպես կարող են միա- սին աշխատելով, նրանք զբոսաշրջիկներին գրավել դեպի Սևծովյան ավազանի տարածաշրջան, որպեսզի կարողանան ճանապարհորդել՝ ծրագրի շրջանակնե- ռում մշակված մեկ միասնական փաթեթով (Տարա- ծառջանային այցելուի միասնական փաթեթ):

Տիկին Մեղեա Ծիծկիշվիլին, ով Վրաստանում PIRT ծրագրի համակարգողն է, շեշտեց, որ այս փո- խայցելությունը չափազանց կարևոր է՝ գործընկեր երկրների ծառայություններ մատուցողների միջև համագործակցության, տարածաշրջանային ցանցի ամրապնդման և հետագայում համատեղ ծրագրեր իրականացնելու առումով: «Վրաստանի, Յայաստանի և Թուրքիայի՝ տուրիզմի ոլորտում ծառայություններ մատուցողները ևս մեկ հնարավորություն ունեցան հանդիպելու, հաղորդակցվելու և քննարկելու տարա- ծառջանում գյուղական տուրիզմը խթանելու նպա- տակով հետագա համագործակցության հնարավոր- ությունները»,- նշեց ծրագրի համակարգողը:

«Յեյֆեր Յայաստան» ՅԿ

ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

ԱՐԴԻԱԿԱՆ ԹԵՄԱ

Երևանի պետական գյուղատնտեսական քոլե- ջում պարբերաբար տեղի ունեցող գիտական կոնֆե- րանսների թեմաներն ունեն ճանաչողական և խիստ ուսուցողական նշանակություն թե՛ ուսանողների, և թե՛ դասախոսական կազմի համար:

Վերջերս քոլեջում կազմակերպված գիտական հերթական կոնֆերանսում արժեքավոր դասախո- սությամբ հանդես եկավ ՀԱԱՀ հիմնադրամի Արիես- տակցական կազմակերպության նախագահ, անաս- նաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Աբրահամյանը: Թեման արդիական էր և կարևոր՝ «Սննդի անվտանգության ներկա վիճակը մեր հանրապետությունում»: Գիտական կոնֆերան- սը օրերս ՀԱԱՀ - ում «Յայագրոֆորում» համաժողո- վի շրջանակներում տեղի ունեցած «Սննդի անվտան- գության հիմնախնդիրները և ներկա մարտահրավեր- ները» խորագրով գիտաժողովի տրամաբանական շարունակությունն էր:

Կոնֆերանսի բացման խոսքով հանդես եկավ քոլեջի տնօրեն Ռ. Թովմասյանը: Նա, անդրադառնա- լով օրվա թեմային, ասաց, որ յուրաքանչյուր երկրի և ազգի գոյատևման գրավականը՝ նրա անվտան- գության ապահովումն է, որի բաղկացուցիչ մասն էլ սննդի անվտանգությունն է, հետևաբար կոնֆերան- սի թեման բխում է մեր ազգաբնակչության շահերից: Ներկայացնելով հյուրին՝ ևս նշեց, որ բանախոսը մեր հանրապետության անասնաբուժության ոլորտի լա- վագույն մասնագետներից մեկն է՝ գիտական համա- պատասխան պատրաստվածությամբ և աշխատան- քային փորձով, ուստի դասախոսությունը լինելու է բովանդակալից և խիստ օգտակար բոլորի, հատկա- պես քոլեջի «Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն» մասնագիտության ուսանողների համար:

Պրոֆ. Վ. Աբրահամյանն իր ելույթում մասնավորապես անդրադարձավ «Կենդանիների վերամշակ- ման ձեռնարկություններ» թեմային, քանի որ սննդի անվտանգության ապահովումը մեծապես կախված

է նրանից, թե ինչպես և ինչ պայմաններում է կա- տարվում կենդանիների վերամշակումը: Ըստ նրա՝ մեր հանրապետությունում ներկայումս բացակայում է համապատասխան անասնաբուժասանիտարական փորձաքննությունը՝ մինչև կենդանիների մորթը և դրանից հետո: Այս առումով, բանախոսն առանձնաց- րեց սննդի անվտանգության ապահովման մի քանի նախապայմաններ՝ անասնաբույժների, փորձագետ- ների առկայություն, կենդանիների վարակման կան- խում գանազան հիվանդություններից, կոմբինատ- ներում առաջացած թափոններից շրջապատի աղ- տոտման կանխում, ազգաբնակչությանը որակյալ սննդամթերքի մատուցում և կենդանու ամբողջական քաշի առավելագույն օգտագործում: Բանախոսը նշեց մեր հանրապետությունում հանդիպող այն հի- վանդությունները, որոնք մեզ սպառնում են կենդա- նիների վերամշակման ձեռնարկությունների ոչ ճիշտ գործունեության, սննդի արդյունաբերության ոլոր- տի նկատմամբ վերահսկողության բացակայության հետևանքով: Դրանցից են սիբիրախոսը, բրուցելյոզը, տուբերկուլյոզը, դաբաղը և այլն:

Պրոֆեսորը ներկաներին փոխանցեց իր հա- րուստ փորձն ու արտասահմանյան երկրների հետ շփումների տպավորությունները, ինչը մեծագույն դաս եղավ ապագա փորձագետների և առհասարակ թեմայով հետաքրքրվողների համար: Կոնֆերանսի վերջում բանախոսին տրվեցին հարցեր՝ թռչնի մսի, կաթնամթերքի անվտանգության, ինչպես նաև գյու- ղական համայնքներում անասնաբուժական ծառա- յությունների վիճակի վերաբերյալ, որոնց ևս սիրով պատասխանեց և պատրաստակամություն հայտնեց մշտապես կապ պահպանել քոլեջի հետ՝ պարբերա- բար հանդես գալով հետաքրքիր դասախոսություն- ներով:

Ռ. Թովմասյանը երախտագիտություն հայտնեց հյուրին՝ բովանդակալից դասախոսության համար:

ԷՄՄԱ ՄԽԵՅԱՆ
Քոլեջի դասախոս

ԾՐԱԳԻՐ

ՆՊԱՏԱԿԸ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏԵՐԻ ՎԵՐԱԽՆՏԵԳՐՈՒՄ

«Մարդը կարիքի մեջ» չեխական հասարակական բարեգործական կազմակերպության և Յայ օգնության միության հետ համատեղ, «Աջակցություն շրջանառու միգրացիային և վերախնտեգրմանը Յայաստանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, Արմավիրի մարզից 2 շահառու դարձել է անհատ ձեռներեց և սեփական գործը հիմնել: Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրի նպատակներից մեկն էլ ուղղված է աշխատանքային միգրանտների վերախնտեգրմանը՝ վերջիններիս հայ- ռենիքում պահելու նպատակով:

Կարիքն ու սոցիալական վիճակի բարելավումը, շատ հաճախ, մարդկանց ստիպում է լքել հայրենիքը և աշխատանք փնտրել օտար ափերում, որտեղ աշխա- տանքային պայմաններն ու ապրելակերպը երբեմն հեռու են քաղաքակրթությունից: Շրջանառու միգ- րանտներին աջակցելու նպատակով, անցած տարվա սկզբից «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազ- մակերպությունը խորհրդատվական աջակցություն է ցուցաբերում Արմավիրի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում՝ հիմնելով միգրացիոն ռեսուրս կենտրոններ: Յայ օգնության միության հետ համա- տեղ, «Մարդը կարիքի մեջ» հայաստանյան ներկայա- ցուցչությունը՝ Եվրոպական միության ֆինանսավոր- մամբ, նշված 4 մարզերում իրականացնում է «Աջակ- ցություն շրջանառու միգրացիային և վերախնտեգր- մանը Յայաստանում» դրամաշնորհային ծրագիրը, որի շնորհիվ Արմավիրի մարզից երկու շրջանառու միգրանտ իրենց բնակավայրում հիմնել են սեփական գործն ու ապահովել ևս 4 մարդու զբաղվածություն:

Արմավիրի տարածքի Այգեշատ գյուղի բնակիչ Թովմաս Մխիթարյանը տարիներ շարունակ զբաղվել է այգեգործությամբ: Մշակում է 6,5 հա հողատարածք, որի մեծ մասը պտղի ու խաղողի այգիներ են:

Նա երբևէ չի մտածել Յայաստանից դուրս գա- լու և այլ վայրում աշխատանք փնտրելու մասին, եթե չլիներ անցած տարվա կարկտահարությունը, որի պատճառով ոչ միայն Թովմաս Մխիթարյանը, այլև մարզի շատ ու շատ գյուղացիական տնտեսություն-

ներ գրկվեցին տարվա բերք ու բարիքից: Գյուղացինե- րից շատերը մեկնեցին արտագնա աշխատանքի կամ, ինչպես ընդունված է ասել, խոպան, այդ թվում՝ նաև Թովմասը:

Ութ ամիս անց վերադարձել է տուն և մասնակցել՝ «Մարդը կարիքի մեջ» չեխական հասարակական բա- րեգործական կազմակերպության և Յայ օգնության միության հետ համատեղ, «Աջակցություն շրջանառու միգրացիային և վերախնտեգրմանը Յայաստանում» դրամաշնորհային ծրագրին, որի համար նախապես դասընթացներ է անցել՝ բիզնես պլան ներկայացնելու համար: Թովմաս Մխիթարյանին այգեգործությամբ զբաղվելու համար անհրաժեշտ էր ունենալ տեխնիկա՝ անիվավոր տրակտոր, որն ավելի քան 4 մլն դրամ է, իսկ իր կողմից ներդրել է ավելի քան 850 հազար դրա- մի սարքավորումներ՝ գուրթան, չիգել, սրակիչ, կցասայ- լակ:

Արմավիրի մարզի միգրացիոն ռեսուրս կենտրոնի տնօրեն Գագիկ Գաբրիելյանը տեղեկացրեց, որ ծրագ- րի պայմանների համաձայն, շահառուն պարտավոր- վել է հիմնել սեփական գործը, գրանցվել հարկային դաշտում և, հնարավորության սահմաններում, ապա- հովել նաև մի քանի մարդկանց զբաղվածություն: Այ- գեշատ գյուղից Թովմաս Մխիթարյանը օգոստոսից անհատ ձեռներեց է և տրակտորը ստանալուց հետո ունի գրանցված 2 աշխատող՝ մեխանիզատոր և գյու- ղատնտես, երկուսն էլ համագյուղացիներ են:

Մյուս շահառուն Էշմիածին քաղաքից Վարդան Խաչատրյանն է, ով 6 ամիս աշխատել է ՌԴ-ում, վերա- դարձել և ծրագրի միջոցով հիմնել է այն գործը, որով զբաղվել է հայրենիքից դուրս: Նա ձեռք է բերել ձկան ապխտման սարքավորում և սառնարաններ, իսկ իր ներդրումը տրանսպորտային փոխադրամիջոցն է: Նա նույնպես օգոստոս ամսից դարձել է անհատ ձեռներեց և ունի 2 աշխատող:

Դրամաշնորհային տեխնիկան մեկ տարի հետո կդառնա շահառուների սեփականությունը, իսկ մինչ այդ նրանց աշխատանքը վերահսկվում է ծրագրի ներկայացուցիչների կողմից: Յայրենիքում աշխա- տանք ունեցող շահառուները կշարունակեն գործը նաև մեկ տարի անց՝ այն ընդլայնելու հեռանկարով:

Սարիկ Խահակյան
Արմավիր

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎԻՏԱՄԻՆՆԵՐ

Մեր օրերում շատերն են տառապում վիտամինային քաղցից, հատկապես՝ գարնանը, քանի որ ձմռան երկրորդ կեսին արդեն բանջարեղենի և մրգերի մեծ մասը կորցնում են իրենց վիտամինային պաշարները:

Ընկույզի օգտակարությունն անհերքելի է. այն խիստ բարեբար է թե՛ մսակերների, և թե՛ հումակերների համար: Հասուն ընկույզները խիստ հագեցնում են, նույնիսկ, ամենամեծ ախորժակ ունեցող մարդկանց: Բոլոր տեսակի ընկույզներում մեծ քանակությամբ վիտամիններ և միկրոէլեմենտներ կան: Դրանք հարուստ են նաև բարդ բաղադրության սպիտակուցներով, որոնք անհրաժեշտ են օրգանների և հյուսվածքների բնականոն գործունեության համար: Սակայն, պետք չէ մոռանալ, որ ընկույզն այնքան էլ դյուրամարս ուտելիք չի համարվում:

Ընկույզի օրական բաժինը պետք է լինի սահմանափակ. 100 հատ փոքր չափի, 30-50՝ միջին կամ 10-15՝ մեծ չափի: Եթե ընկույզներն օգտագործում եք թարմ մաղաղանոսի, սամիթի, հազարի կամ չրերի հետ, ապա կարող եք ընկույզի չափաբաժինը կրկնապատկել: Իհարկե, նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում, շատ ընկույզ ուտելն անհնար է. այն չափից դուրս սնդարար և հագեցնող մթերք է:

Եվրոպացիների նախընտրած ընկույզները՝ պիստակն ու հնդկական ընկույզն են: Ամերիկացիները գերադասում են գետնանուշը, արևելյան ազգերը՝ գետնանուշն ու նուշը: Աֆրիկյան երկրների բնակիչները նախապատվությունը տալիս են իրենց տեղական կոկոսի ընկույզներին: Մեզ մոտ՝ Հայաստանում վաղուց ի վեր առաջին տեղում են հունական ընկույզն ու գետնանուշը:

Գետնանուշն այլ կերպ անվանում են նաև գետնընկույզ կամ չինական ընկույզ, չնայած այն դասվում է ընդավորների ընտանիքին: Այն ոչ միայն ամենասն-

դարար ընկույզներից մեկն է, այլև մի սննդամթերք է, որը բացարձակապես չի գիրացնում: Օրական 20-25 հատ գետնանուշ ուտելու դեպքում, զգալիորեն բարելավվում է արյունաստեղծ օրգանների աշխատանքը:

Մայրու ծառի ընկույզները կարող են ուտել բոլորը: Դրանցում բացարձակապես բջջանյութ չկա, դյուրամարս են և հագեցած թեթև սպիտակուցներով:

Պնդուկը (անտառային ընկույզ) ցուցված է հատկապես այն մարդկանց, ում աշխատանքային ծանրաբեռնվածությունը մեծ է: Անտառային ընկույզը, «հագեցնում է» բոլոր մկանները, քանի որ մեծ քանակությամբ վիտամին E և սպիտակուցներ է պարունակում: Պնդուկն օգտակար է այն մարդկանց համար, ովքեր տառապում են միզաքարային հիվանդություններով: Մեղրի համակցությամբ պնդուկը «պայքարում է» սակավարյունության և հյուսվածքային դեմ, իսկ կերակրող մայրերի մոտ բարձրացնում է կաթնարտադրությունը:

Նուշն ընկույզներից «ամենանեղն» է: Այս ընկույզի տարատեսակներից մեկը՝ դառնահամ նուշն է, որը մեծ քանակությամբ եթերային յուղեր է պարունակում: Այդ իսկ պատճառով, օրական պետք է ուտել ոչ ավելի, քան 2 հատ: Սրան հակառակ՝ քաղցրահամ նուշը շատ օգտակար է հիշողության և տեսողության համար, այդ առումով, դրանից կարելի է ուտել առանց սահմանափակումների: Օգտակարությունից զատ՝ նուշն ընկույզներից ամենագեղեցիկն է և պատահական չէ, որ աչքերի հազվադեպ պատահող գեղեցիկ կտրվածքն անվանում են «նշաձև»:

ՌԻՄԱՆԿԱՐ

ՀՈՂԻ ԲՈՒՅՐՈՎ ԱՐԲԵՅԱԾ

Նոյեմբերյանի Լճկածոր համայնքում այնքան շատ են սարյանական գույները, այնքան տպավորիչ ու ինքնատիպ: Կարծես մի անհայտ ձեռք այս փոքրիկ աշխարհում վրձնել է անկրկնելի պատկերներ, որոնցով անհնար է չհիանալ ու չստեղծել սեփականը: Միայն այդ գունեղ աշխարհում էլ սիրով իր երազանքների դրյակն է կառուցել Ջուլիետա Քեչիշյանը:

Երիտասարդ մի կին, ով բավականին լրջորեն զբաղվում է գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրությամբ և անասնապահությամբ: Ջուլիետան ունի նաև սեփական տնկարան, որտեղ արտադրվում և տարածաշրջանում իրացվում են արքայանարնջի, դեղձի և նաև բարձրորակ տնկիներ: Նրա պտղատու այգին երբեք չի ծերանում, միշտ լրացվում է երիտասարդ տեսականիներով, որոնք բարձր բերք են ապահովում:

Արևահամ այդ պտուղներն իրենց համային ու ապրանքային տեսքով շուկայում մեծ պահանջարկ ունեն: «Եթե ձգտում ես առողջ ու անհոգ լինել, ապա պիտի զգաս հողի բույրը, արբենաս նրանով, բարիք արտադրես ու համտեսես նրա պարզևած մաքուր, օրգանիկ արտադրանքը: Ես, այդ առումով, ինձ աշխարհի երջանիկ կանանցից եմ համարում», - ասում է Ջուլիետան: Նա երբեք հոգևածություն չի զգում. մշակում է 4 հա հողատարածք, խնամում 8 խոշոր, 3 մայր խոզ: Նպատակ ունի ընդլայնել տնտեսությունը, այն ավելի եկամտաբեր դարձնել:

Նրա առաջին օգնականներն ամուսինն ու երեք երեխաներն են, ովքեր երբեք զուլխ չեն պահում և դժվարին պահերին կանգնած են նրա կողքին: «Աշխատանքում պիտի հոգի ու սիրտ դնես, պատասխանատվություն և ազնվություն: ԶԷ՞ որ արդյունքը պիտի առաջին հերթին գոհացնի քեզ, հետո նոր գնորդին», - ասում է կին ֆերմերը:

Լճկածոր համայնքում նա բարի համբավ է վայելում իր անաչառության, սկզբունքայնության և աշխատասիրության համար: Բոլորն են համոզված, որ նա խոսքի տեր և վստահելի ընկեր է:

«Եթե Ջուլիետայի ձեռքը կպել է, ուրեմն՝ որակի մասին խոսք չկա, լավից լավն է», - ավելացնում են համագյուղացիները: Դաշտից՝ այգի, տնկարան, ֆերմա, այնուհետև՝ տուն, շուկա: «Զեմ զգում հոգևածություն, որովհետև ժամանակ չունեմ մտածել այդ մասին: Ինձ թվում է այն մարդիկ են հոգնում, որ չեն աշխատում: Աշխատանքն ազնվացնում, թարմացնում է մարդուն, ուժ տալիս: Միավրձ չեմ լինի, եթե կրկնվեմ՝ ես արբեցած եմ հողի բույրով, այն ինձ դրական էներգիա է հաղորդում», - ասում է Ջուլիետան:

Տարբիկ Նազիկյան



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ագրոլուսո» թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի «Ագրոգիտություն» ամսագիր

«Ագրոլուսո» թերթ
 1 տարվա գինը՝ 3960 դրամ
 6 ամսականը՝ 1980 դրամ
 1 համարինը՝ 20 դրամ

«Ագրոգիտություն» ամսագիր
 1 տարվա գինը՝ 8100 դրամ
 6 ամսականը՝ 4050 դրամ
 1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
 Գյուղարևութային աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
 «Նայփոստ», «Նայմամուլ», «Պրես-Արարաչե» կազմակերպությունները:

ՄԿՍՎԵԼ Է 2015 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ